ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝ *Ա.Ղուկասյանի*

Կ.Գրիգորյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար *Վ.Վարդազարյանի*

ՀՀ Արմավիրի մարզի զիվորական կոմիսար *Ա.Համբարձումյանի*

ՀՀ Պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժնի պետ, փոխգնդապետ *Ա.Սարգսյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2018թվականի նոյեմբերի 23-ի նիստի օրակարգը հաստատելու մասին.

/Հ. Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

2.2018 թվականի հոկտոմբերի 21-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում նորընտիր և վերընտրված համայնքների ղեկավարների ներկայացում:

/Հ.Մաթևոսյան-ՀՀ Արմավիրի մարզպետ/

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը առ 01.11.2018 թ դրությամբ:

/Վ.Մկրտչյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ /

4. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների 2019 թվականի բյուջեների կազմման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

/Վ.Մկրտչյան. - ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

5. ՀՀ Արմավիրի մարզի հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև վարձակալության տրամադրված հողի հարկի վարձակալական վճարի խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկատվություն:

/Վ.Մկրտչյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

6. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքը ՀՀ Արմավիրի մարզում:

/Ա.Այվազյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

7.<<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նախընտրական քարոզչության ժամանակ հանրային ծառայողների մասնակցության սահմանափակումների վերաբերյալ իրազեկում:

/ Լ.Հարությունյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար/

8.2018 թվականի ձմեռային զորակոչի խնդիրները և <<Ես եմ>> ծրագրի շրջանակներում հարցի քննարկում:

/Ա.Սարգսյան - ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժնի պետ,փոխգնդապետ/

Մինչև օրակարգային հարցերի քննարկումը ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը անդրադարձավ մարզի խորհրդի նիստին համայնքների ղեկավարների բացակայություններին, նշելով, որ ամենայն պատասխանատվությամբ պետք է վերաբերվել մասնակցությանը՝ բացակայությունները համարելով անթույլատրելի:

Օրակարգային առաջին հարցով ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը մարզի խորհրդի նիստի մասնակիցների հաստատմանը ներկայացրեց իր սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 23-ի նիստի օրակարգը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 23-ի նիստի օրակարգը:

Օրակարգային երկրորդ հարցով մարզպետ Հ.Մաթևոսյանը ներկայացրեց սույն թվականի հոկտեմբերի 21-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների 8 նորընտիր և 6 վերընտրված համայնքապետերին՝ նրանց մաղթելով երկարատև և բեղմնավոր աշխատանքային գործունեություն՝ ի շահ համայնքների զարգացման և հզորացման:

Մարզպետը ՏԻՄ ներկայացուցիչներին շնորհավորելով տեղական ինմքնակառավարման մարմինների 22-րդ տարեդարձի կապակցությամբ՝ տեղեկացրեց, որ օրվա առթիվ Հայաստանի համայնքների միության կողմից կազմակերպված «Տարվա լավագույն համայնք» մրցանակաբաշխությանը «Մաքուր համայնք» անվանակարգում մրցանակ է ստացել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ (Էջմիածին) համայնքը. իսկ «Մշակութային լավագույն համայնք» անվանակարգում՝ Փարաքարը:

Օրակարգային երրորդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման և աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը առ 01.11.2018թ դրությամբ ներկայացրեց մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.. Մկրտչյանը: Նա մասնավորապես նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների փաստացի մուտքերը նախատեսված 2136134,2 հազար դրամի դիմաց կազմել են 1866627,4 հազար դրամ, կատարողականը՝ 87,4 տոկոս: Ըստ նրա ՝սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 0,6 տոկոսով:Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը ներկայացրեց 100 տոկոս և բարձր, ինչպես նաև 50 տոկոսից ցածր ցուցանիշներ ունեցող համայնքների ցանկը:/տեղեկատվո(թյունը կցվում է/:Նա ներկայացրեց նաև համայնքներում աշխատավարձերի մարման գործընթացը՝ տեղեկացնելով, որ նոյեմբերի 15-ի դրությամբ աշխատավարձի պարտք ունի թվով 13 համայնք և այն կազմում է 14377,8 հազար դրամ:

Օրակարգային չորրորդ հարցով ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.. Մկրտչյանն անդրադարձավ համայնքների 2019 թվականի բյուջեների կազմման գործընթացին՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին վերոնշյալ աշխատանքներն իրականացնել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Օրակարգային հինգերորդ հարցի շրջանակներում ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանն անդրադարձավ խոշոր հարկատուների կողմից տարիներ շարունակ չվճարված հողի հարկին և գույքահարկին՝ տեղեկացնելով, որ այդ հարկատեսակների մասով չվճարված գումարի չափը հասնում է 280.0 մլն. դրամի: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառման համար իրավաբանական և խորհրդատվական աջակցություն ստանալու նպատակով

Վ.Մկրտչանը առաջարկեց համայնքների ղեկավարներին դիմել մարզպետարանի իրավաբանական բաժին:

ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը անդրադառնալով քննարկվող օրակարգային հարցերին՝ խիստ կարևորեց սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների բարելավումը և աշխատավարձերի պարտքերի մարումը: Նա նշեց, որ անհրաժեշտ է ակտիվ և համախմբված աշխատանքներ իրականացնել խոշոր հարկատուների կողմից չվճարված գումարները գանձելու և համայնքային բյուջե մուտքագրելու ուղղությամբ՝ փաստելով, որ այդ գումարներն են նպատակաուղղվելու համայնքներում առկա խնդիրների լուծմանը: նա առաջարկեց համայնքների ղեկավարներին ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին՝ և ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք հասցնելու առավելագույնի:

Օրակարգային վեցերորդ հարցով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը՝ ներկայացնելով գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը ՀՀ Արմավիրի մարզում: Նա նշեց,որ 2018 թվականի հունիսի 1-ի դրությամբ ցանքատարածությունները կազմել են 27211,43 հեկտար, իսկ գյուղատնտեսական արտադրությամբ մեջ օգտագործվել է 41421,67 հեկտար, այդ թվում՝ 9042,4 հեկտար պտուղ, 6791 հեկտար խաղող: Ըստ մշակաբույսերի ներկայացնելով մարզում արտադրված գյուղմթերքի ծավալը, նա ընդգծեց, որ մարզում բերքի իրացման հարցը միշտ գտնվել է կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում, այդ նպատակով պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել վերամշակող կազմակերպությունների և արտահանողների հետ: Նրա խոսքով միայն մարզում գործող մթերող կազմակերպությունների կողմից մթերվել է 7803 տոննա պտուղ-բանջարեղեն և 51732 տոննա խաղող:Անդրադառնալով աշնանացանի և այգեթաղի իրականացման աշխատանքներին, նա տեղեկացրեց, որ մարզում արդեն կատարվել է 1800 հեկտարի աշնանացանի, իսկ 6791,5 հեկտար խաղողի այգուց՝ 3000 հեկտարի վրա այգեթաղի աշխատանքներ: Ամփոփելով օրակարգային հարցի կապակցությամբ իր զեկույցը, Ա.Այվազյանը տեղեկացրեց, որ հաշվետու տարում բնական աղետների հետևանքով 6878 հողօգտագործողի 20-100 տոկոսի չափով վնասված 4034,99 հեկտար մշակովի հողատարածքի համար պետության կողմից նախատեսվող մասնակի փոխհատուցման հարցն առաջիկա շաբաթվա ընթացքում հնարավոր լուծում կստանա:

ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը անդրադառնալով բնական աղետից տուժած գյուղացիական տնտեսություններին մասնակի փոխհատուցում տրամադրելուն՝ նշեց, որ իր համար նախընտրելի է պետական աջակցություն ցուցաբերել բոլոր գյուղացիներին՝ անկախ կրած վնասի չափից, ինչպես նաև առաջարկեց համայնքների ղեկավարներին բացատրական աշխատանքներ իրականացնել բնակչության շրջանում առ այն,որ հողի հարկի ու գույքահարկի գծով պետության կողմից որևէ զիջում չի լինելու, ինչը պայմանավորված է օրենքի և

պետական բյուջեի առջև ունեցած պարտավորությունների կատարման անխուսափելիությամբ:

Օրակարգային յոթերորդ հարցով ՀՀ Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Լ.Հարությունյանը ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նախընտրական քարոզչության ժամանակ հանրային ծառայողների սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը:Նա մասնավորապես նշեց, որ օրենքով արգելվում է նախընտրական քարոզչություն կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական և մարդկային ռեսուրսներն օգտագործելը հանրային ծառայողներին, առողջապահական բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների աշխատողներին իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալը: Նա միաժամանակ տեղեկացրեց նաև, որ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար աշխատաժամանակ է սահմանվել առավոտյան 9:00-ն, իսկ ավարտ՝ երեկոյան 18:00-ն՝ առաջարկելով նախընտրական քարոզչության ընթացքում պահպանել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված պահանջները:

Անդրադառնալով քննարկվող օրակարգային հարցին ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյաննն ընդգծեց ,որ ընտրական գործընթացում բացառվելու է մարզպետարանի կամ այլ մարմինների ու անձանց կողմից քաղաքացիներին ուղղորդումը:Նա նշեց, որ ընտրական օրենսգրքով սահմանված են հետևյալ այն հստակ գործառույթները, որոնցով պետք է առաջնորդվեն համայնքապետերը՝

1.Տեղամասային կենտրոնների ձևավորում, տեղամասային կենտրոնի պատասխանատու նշանակելը, կենտրոնի ջեռուցում և էլ, էներգիայով ապահովման, ինչպես նաև տեղամասային կենտրոնին գույքով և չհրկիզվող պահարանով ապահովում:

2.Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզչական պաստառներ փակցնելու նպատակով տարածքի հատկացում:

3.Նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով սահմանված կարգով անվճար դահլիճների և տարածքների տրամադրում:

Նա հավելեց,որ համախմբված աշխատանք է տարվելու միայն ազատ,արդար և թափանցիկ ընտրություններ ապահովելու համար:

Օրակարգային ութերորդ հարցով հանդես եկավ ՀՀ Պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի զորակոչային բաժնի պետ, փոխգնդապետ Արեն Սարգսյանը:Նա ներկայացնելով 2018 թվականի ծմեռային

զորակոչի ընթացքում իրականացվող աշխատանքները, առանձնահատուկ անդրադարձավ և կարևորեց «Ես եմ» ծրագիրը: Նա նշեց,որ այս ծրագիրը գործել է 2017 թվականի ձմեռային և 2018 թվականի ամառային զորակոչի ընթացքում: Նա նշեց,որ շատ կարևոր է, որ այն լինի շարունակական, որն ունի կարևոր նշանակություն մեր պաշտպանական գերատեսչությունների և երկրի անվտանգության համար: Ներկայացնելով ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների մանրամասները՝ փոխգնդապետ Ա.Սարգսյանն առաջարկեց իրականացնել համագործակցված աշխատանքներ համայնքապետերի, մարզային կառույցների և շահագրգիռ կազմակերպությունների հետ, գործընթացը հնարավորինս լիարժեք և արդյունավետ իրականցնելու համար: Ա.Սարգսյանը առաջարկեց նաև համայնքապետերին իրականացնել ազգաբնակչության շրջանակներում լայնածավալ բացատրական աշխատանքեր, որպեսզի մեր հայրենակիցները, զինակոչիկներն ու իրենց ընտանիքի անդամները առավել հստակ տեղեկացված լինեն ծրագրին: Ամփոփելով օրակարգային հարցերը, ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը նշեց, որ աշխատելու է ՀՀ Արմավիրի մարզի ազգաբնակչությանը հուզող և մարզի համայնքներում առկա խնդիրները ներկայացնելու կառավարությունում, հնարավորինս նրանց օգնելու, աջակցելու և հոգսերը թեթևացնելու նպատակով: Աշխատանքների կազմակերպման ընթացքում գործելու է միմիայն օրենքի սահմաններում,քանզի բոլորը հաշվետու և պատասխանատու են օրենքի առջև:

Օրակարգային հարցերի քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 26.12.2018 14:57:09 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Արձ.՝ Մ.Առուշանյան